ԻՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ԱՄԻՍ **2017**

ԻՆՖՈԳՐԱՖԻԿԱՅԻ ՄՐՑՈՒՅԹ

Եթե Դուք.

- **նորարար եք,**
- **սիրում եք և կարող եք երևույթները պատկերավոր ներկայացնել,**
- **հետաքրքրված եք ֆինանսական հարցերով,**

ապա մասնակցե՛ք Կենտրոնական բանկի հայտարարած ինֆոգրաֆիկայի մրցույթին: Անհրաժեշտ է դրսևորել վերլուծական մտածողություն, հայտարարված 2 թեմաներով պատրաստել ինֆոգրաֆիկա.

Ինֆոգրաֆիկան տեղեկատվության, տվյալների, գիտելիքի վիզուալ, գրաֆիկական տեսքով ներկայացումն է: Դրա միջոցով նախադասությունների խումբը դառնում է ավելի հասկանալի և արագ փոխանցվող մի պատկեր:

Պայմանները

- մրցույթին մասնակցությունն ԱՆՎՃԱՐ է,
- ինֆոգրաֆիկան պետք է պատրաստված լինի գրաֆիկ-դիզայներական լուծումներով ու էլեկտրոնային եղանակով,
- ինֆոգրաֆիկան պետք է լինի Ձեր հեղինակային աշխատանքը, ոչ թե կրկնօրինակված կամ համացանցից բեռնված. մեջբերումների դեպքում պետք է նշել հեղինակին,
- ինֆոգրաֆիկայի հեղինակային իրավունքը փոխանցվում է ՀՀ կենտրոնական բանկին՝ դիմում-հայտում նշված համաձայնությամբ,
- ինֆոգրաֆիկան կարող է օգտագործվել կրթական և տեղեկատվական բնույթի նյութերում՝ էլեկտրոնային կամ տպագիր տարբերակով,
- ինֆոգրաֆիկան պետք է լինի ուսումնական, դաստիարակչական բնույթի և չպետք է կրի քաղաքական, խտրական (ռասսայական, տարիքային, սեռական, էթնիկական, կրոնական և այլ) բնույթ,
- ինֆոգրաֆիկան պետք է օգնի պատասխանել ի՞նչ, ինչո՞ւ, ինչպե՞ս, ինչո՞ւ է կարևոր և նմանատիպ այլ հարցադրումներ-ների,
- ինֆոգրաֆիկան պետք է լինի pdf ձևաչափով,
- ինֆոգրաֆիկայի վրա պետք չէ նշել հեղինակի անունը կամ կատարել ինքնությունը բացահայտող այլ գրառումներ,
- ընդունումից հետո ՀՀ կենտրոնական բանկի և Ձեր կողմից աշխատանքում կարող են համատեղ իրականացվել խմբագրական փոփոխություններ:

Ե՞րբ կհայտարարվեն արդյունքները

Հաղթողների անունները կհրապարակվեն, և մրցանակները կհանձնվեն մայիսին՝ «Իմ ֆինանսների ամիս 2017» ծրագրի փակման արարողության ժամանակ: Արդյունքների մասին կարող եք տեղեկանալ նաև **www.abcfinance.am** կայքից:

Թեմաներ

«Այսպես է իմ 1-ը 2 դառնում»
Այս ինֆոգրաֆիկան պետք է պատկերավոր ներկայացնի, թե ինչպիսի ֆինանսական աճի է հնարավոր հասնել արժեթղթերում ներդրումներ կատարելու միջոցով:

«Եթե պարտքով՝ ապա խելամտորեն »
Պետք է մատչելի ձևով ներկայացնի պարտքի արդյունավետ կառավարման եղանակներ կամ առաջարկներ, որոնք կարող են հանգեցնել դրական արդյունքի:

Ո՞ւմ համար
Մրցույթին կարող են մասնակցել **16 տարին լրացած** բոլոր անձինք:

Ե՞րբ
Աշխատանքները կընդունվեն **2017 թվականի մարտի 10-ից մայիսի 8-ը**:

Ինչպե՞ս մասնակցել

Քայլ 1.
Մասնակցության համար **www.abcfinance.am** կայքի «Իմ ֆինանսների ամիս 2017» **Ինֆոգրաֆիկայի մրցույթ** բաժնից անհրաժեշտ է բեռնել **ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԸ,** ծանոթանալ դրույթներին, լրացնել ու կցել ինֆոգրաֆիկային:

Քայլ 2.
Ուղարկել **consumerinfo@cba.am** էլ. հասցեով ԻՆՖՈԳՐԱՖԻԿԱՆ և ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԸ՝ նամակի վերնագիրը նշելով **ԻՆՖՈԳՐԱՖԻԿԱՅԻ ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցանակներ

Յուրաքանչյուր թեմայի շրջանակում ժյուրին կընտրի 2 հաղթողների, որոնք կարժանանան մրցանակների՝
1-ին տեղ՝ 75000 դրամ,
2-րդ տեղ՝ 50000 դրամ:
Լավագույն աշխատանքները կտեղադրվեն www.abcfinance.am կայքում, սոցիալական կայքերի (Facebook, Twitter) համանուն էջերում:
Կարող են լինել նաև հատուկ մրցանակներ բանկերի, ապահովագրական ընկերությունների, վարկային կազմակերպությունների և այլ ֆինանսական կառույցների կողմից:

Ո՞ւր դիմել հարցերի դեպքում

consumerinfo@cba.am
@abcfinance_CBA
www.abcfinance.am
+37410592697
ABCFinance.am
#MFM2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

abcfinance.am
ԱՅԲ ԲԵՆ ԳԻՄ ՖԻՆԱՆՍՆԵՐ